

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 46/09**

Քաղ. Երևան

23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Ադամյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հունվարի 23-ի նիստում (արձանագրություն № 67/3) քննարկեց GA MODEFINE S.A. (CH) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. հոկտեմբերի 14-ի բողոքը՝ «Այգեպատ» գինու-կոնյակի գործարան ՍՊԸ-ի «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ. No.12180) ապրանքային նշանի գրանցման դեմ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը գտնում է, որ վերոնշյալ ապրանքային նշանը գրանցվել է GA MODEFINE S.A. (CH) ընկերության իրավունքների խախտմամբ, նկատի ունենալով, որ այդ ընկերությունը՝ իր 1978 թվականի առաջին հայտից սկսած մինչ այսօր, ունի 32 ապրանքային նշան, որոնք իրենց մեջ ներառում են «ARMANI» տարրը, որը քաջ հայտնի է սպառողին ողջ աշխարհում, նաև՝ Հայաստանում: Հետևապես «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ. No.12180) ապրանքային նշանով ապրանքները կարող են մոլորության մեջ գցել սպառողին և առաջացնել անառողջ, անբարեխիղճ մրցակցություն, քանի որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանով մակնշված ապրանքները կարող են կապ ենթադրել GA MODEFINE S.A. ընկերության կողմից գրանցված աշխարհահռչակ ապրանքային նշանների և գրանցված նշանի սեփականատերերի միջև:

Ելնելով դրանից բողոքարկողը խնդրել է անվավեր ճանաչել «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ. No.12180) ապրանքային նշանի գրանցումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 2008թ. նոյեմբերի 11-ին հետձանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ. No.12180) ապրանքային նշանի սեփականատեր «Այգեպատ» ԳԿԳ ՍՊԸ-ին (Արարատի մարզ, գյուղ Արարատ) և նրա ներկայացուցիչ Գ.Հայրապետյանին (Երևան, Սարկավազի փ. 2-րդ նրբանցք, 1-ին տուն) բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. հոկտեմբերի 14-ին GA MODEFINE

S.A. ընկերության ներկայացված բողոքը քննարկման ընդունելու, նիստերի անցկացման թվականի (2008թ. դեկտեմբերի 8, 2009թ. հունվարի 23), բողոքի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին: Համապատասխան փոստային ծանուցագրերի համաձայն սեփականատերն ու նրա ներկայացուցիչը իրենց հասցեագրած գրությունները ստացել են 24.11.2008թ., 25.11.2008թ. և 31.12.08թ.:

«ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ. No.12180) ապրանքային նշանի սեփականատեր «Այգեպատ» ԳԿԳ ՍՊԸ տնօրեն Ռ.Հարությունյանը 2008թ. հունվարի 23-ին առարկություն է ներկայացրել բողոքարկման խորհրդի նախագահ Ա.Ազիզյանի անունով, բերելով իր փաստարկներն ու հիմնավորումները GA MODEFINE S.A. (CH) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. հոկտեմբերի 14-ի բողոքի վերաբերյալ: Առարկության մեջ նշվում է, որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանի հայտի փորձաքննության փուլում, 23.07.2007թ., հայտատուն գործակալությունից ստացել է հարցում հայտարկված ապրանքային նշանի պատկերի մեջ «ARMANI» բառը օգտագործելու կապակցությամբ, և այդ առումով տրվել են համապատասխան բացատրություններ, որոնք և հաշվի առնելով, փորձաքննությունը որոշում է կայացրել նշանը գրանցելու մասին: Ընդ որում, բացատրությունների հիմքում ընկած է մասնավորապես, այն փաստը, որ «Armani» (հայերեն Արմանի) բառը հնուց ի վեր հայերի և Հայաստանի անվանման այն տարատեսակներից մեկն է (ինչպես նաև Արմենիա, Արմինա, Արմանստան, Արմենիեն և այլն), որոնց հիմքը համդիսանում է «արմ» արմատը, որը, ակադեմիկոս Ռ.Իշխանյանի բացատրությամբ, «...քնիկ հայերեն բառ է, նշանակում է սերունդ, զարմ, արմատ» (Ռ.Իշխանյան «Պատկերագրող Պատմություն Հայոց» «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 1989թ. գիրք առաջին, էջ 52): Նշվում է նաև, որ ապրանքային նշանի շրջանաձև պատկերի մեջ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» գրառումը տարբերվում է բողոքարկողի ապրանքային նշանի գրառումից, իսկ Մասիսի ուրվագծի պատկերը իրականորեն արտացոլում է արտադրողի և ապրանքի հայկական ծագումը:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է, որ բողոքում բերված են մի շարք փաստարկներ, որոնք, ըստ բողոքարկողի, հիմնավորում են «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» (ՀՀ վկ.No.12180) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու իր խնդրանքը:

1. Բողոքի հիմքում դրված է այն պնդումը, որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանը գրանցվել է GA MODEFINE S.A. (CH) ընկերության իրավունքների խախտմամբ, քանի որ այդ համակցված նշանի մեջ օգտագործված ARMANI տարրը ներառված է GA MODEFINE S.A. (CH) ընկերության անունով արդեն գրանցված բազմաթիվ ապրանքային նշանների մեջ:

Կոլեգիան մանրամասնորեն քննարկել է հարցը, ինչպես և պարզել է, որ, նախ՝ 33-րդ դասի ապրանքների՝ ալկոհոլային խմիչքների համար գրանցված GA MODEFINE S.A. (CH) ընկերության «ARMANI» ապրանքային նշան չկա: Ինչ վերաբերում է հայկական ընկերության նշանի մեջ կատարված ARMANI գրառմանը, ապա այդ բառն ունի պատմական ծագում, ինչի բացատրությունը ներկայացվել էր դեռևս փորձաքննությանը և ընդունվել վերջինիս կողմից, հետևապես, կոլեգիայի կարծիքով, բողոքարկողի այդ պնդումը գրանցման մերժման հիմք չի կարող հանդիսանալ:

2. Բողոքարկողի մեկ այլ փաստարկը վերաբերում է նրան, որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանով մակնշված «Այգեպատ» ԳԿԳ ՍՊԸ-ի արտադրանքը կարող է մոլորության մեջ գցել սպառողին և առաջացնել անառողջ, անբարեխիղճ մրցակցություն, որն արգելվում է բողոքում մեջբերված Փարիզյան կոնվենցիայի 10^{bis} հոդվածի դրույթների պահանջներից ելնելով:

Սակայն կոլեգիան համարում է, որ ARMANI բառի օգտագործումը «Այգեպատ» գինու-կոնյակի գործարանի արտադրանքի վրա հայկական շուկայում սպառողի մոտ մոլորություն չի կարող առաջացնել 33-րդ դասի ապրանքների նկատմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես հայտնի է, Հայաստանում «ARMANI» ապրանքային նշանի տակ շրջանառության մեջ է դրվում հագուստ և այլ համանման ապրանք, որը վաճառվում է մի քանի մեծ խանութներում, և որի սպառողները շատ լավ տեղյակ են, այդ ապրանքների ծագման մասին: Ինչ վերաբերում է Հայաստանի միջին սպառողին, ապա նրա մոտ էլ շփոթություն չի կարող առաջանալ, քանի որ՝

ա) պիտակի ձևավորումը և դրա վրա օգտագործված տարրերն միարժեք ցույց են տալիս «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» նշանով մակնշված ապրանքի (ալկոհոլային խմիչքների) Հայաստանյան ծագումը, և եթե սպառողին նույնիսկ հայտնի չէ «ARMANI» ապրանքային նշաններով այլ ապրանքների իրական ծագումը, ապա շփոթության հարց չի կարող առաջանալ, քանի որ, ինչպես բողոքում է նշված, սպառողին հայտնի է, որ GA MODEFINE S.A. (CH) ընկերության «հռչակավոր» ARMANI-ն Հայաստանյան ծագում չունի :

բ) ի տարբերություն «ARMANI» ապրանքային նշաններով այլ ապրանքների վրա (օրինակ՝ հագուստի) շրջանառությանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն, ալկոհոլային խմիչքների պիտակավորման նկատմամբ սահմանված պահանջներից ելնելով, նշված ապրանքների (33-րդ դաս) պիտակի վրա պարտադիր նշվում են արտադրողի անվանումը, հասցեն, լիցենզիայի համարը և այլ տվյալներ, որոնք միարժեք նույնականացնում են ապրանքի իրական ծագումը:

3. Վերջին փաստարկը, որը ներկայացրել է բողոքարկողը, այն է, որ TRIPS-ի 16-րդ հոդվածի համաձայն «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանը չի կարող գրանցվել «Այգեպատ» ԳԿԳ ՍՊԸ-ի անունով, քանի որ այդ գրանցումը կարող է վնաս հասցնել GA MODEFINE S.A. ընկերությանը:

Կոլեգիան համարում է, որ TRIPS-ի դրույթներից օգտվելու համար պետք է ապահովվի երկու պայման. մեկը, որ նշանը սպառողին մոլորության մեջ է գցում, ենթադրելով, որ արտադրողների մեջ կապ կա, և երկրորդը, որ անպայման պետք է վնաս հասցվի բողոքարկողի շահերին, և հենց ինքը՝ բողոքարկողը, պարտավոր է դա ապացուցել, որպեսզի գրանցումը չեղյալ ճանաչվի: Կոլեգիայի կարծիքը այն է, որ տվյալ դեպքում բողոքարկողը տեսականորեն է մոտենում, մինչդեռ գրանցումը չեղյալ ճանաչելու համար պետք է փաստացի հիմքեր ներկայացնել այդպիսի վնասի մասին, հատկապես հաշվի առնելով, որ «Այգեպատ» գինու-կոնյակի գործարանի արտադրանքը ոչ մի բանով չի հիշեցնում այն ապրանքը, որն «ARMANI» ապրանքային նշանի տակ շրջանառության մեջ է դրվում Հայաստանում: Հետևապես, կոլեգիայի կարծիքով, ընկերության բերված վերջին փաստարկը ևս հիմնավորված չէ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» դ 12180 գրանցումն անվավեր ճանաչելու համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Հարցի քննարկման ընթացքում բողոքարկման խորհրդի մոտեցումը եղել է այն, որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանը գրանցման է ներկայացվել հայկական կոնյակի համար ընդունված գույնային լուծումով և դասական դիզայնով (Մասիսի երկնագույն ուրվանկար, խաղողի ողկույզի և տերևի պսակաձև շղթա և այլ): Գրառումը կատարվել է ARMANI, ընդ որում, ոչ թե ARMANI-ին նմանացնելու նպատակով, այլ նկատի ունենալով, որ այդ բառն ունի պատմական ծագում, դրա մեկնաբանումը ներկայացվել էր փորձաքննությանը, որը նշանը գրանցելու մասին հիմնավորված որոշում է կայացրել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև այն, որ GA MODEFINE S.A. (CH) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի բողոքում բերված փաստարկները հիմք չեն հանդիսանում եզրակացնելու, որ նշանի գրանցումը հակասում է Փարիզյան կոնվենցիայի 10^{bis} հոդվածի և TRIPS համաձայնագրի 16-րդ հոդվածի դրույթներին, բողոքարկման խորհուրդը համարում է, որ «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» դ12180 գրանցումը Հայաստանում անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «բ» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել GA MODEFINE S.A. (CH) ընկերության բողոքը և «ԱՅԳԵՊԱՏ ARMANI» ապրանքային նշանի դ12180 գրանցման գործողությունը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան